Պարույր Սևակ

Քառքի պատվանդան

Նահանջի ճամփան էր մեր ոտքի տակ ընկել,
Վտանգված էր հողը մեր գեղեցիկ...
Մենք միասին էինք այդ վայրկյանին, ընկե՛ր,
Մենք միասին, մեկտեղ նահանջեցինք:
Հողը կառչում էր մեզ իր գորշ կպչուն կավով,
Խրամատն էր կտրում դարձի ուղին:
Բայց մենք զինվոր էինք, և իր հրամանով
Հաղթանակն էր սաստում՝ զատվե՛լ հողից:
...Նայում էին հեռվից, ովքեր ծնել էին,
Ովքեր սնել էին և մեզ սիրել կյանքում...
Շուրջը՝ սառնամանիք, շուրջը ձյուներ էին,
Մերթ՝ անարատ, ճերմակ, մերթ՝ արնագույն:
Ու մենք քայլում էինք, ու մենք սողում էինք:
Ոչի՛նչ, սողում էինք, որ չսողա՛նք կյանքում:
Մեր հողն էր մեզ կրում, մենք մեր հողում էինք:
Ահա ինչու՝ նրանք ցրտից դողում էին,
Իսկ մենք այրվո՛ւմ էինք, մենք ողողվո՛ւմ էինք
Մեր քրտինքով ցասման...
Ինչպես ես՝ իմ Զանգուն,
Անցանք քեզ հետ մեկտեղ քո Դոնը և Վոլգան:
Խաղաղությունն էր դեռ մեր ականջին զնգում.

Դեռ մուրճն էր քո ձեռքին, գրիչն էր իմ ձեռքում-
Դեռ մենք կիսո՛վ էինք զինվորական:
Դու այդպես էլ ընկար - կիսով՝ արդեն մարտիկ,
Կիսով չափ դեռ դարբին կոլխոզային,
Միտքդ՝ թողած մուրճիդ, ձեռքդ՝ ավտոմատիդ
Եվ ականջդ՝ մոտիկ հաղթանակի ձայնին:
Իսկ ես դեռ ապրեցի: Թողած թուղթ ու մատիտ,
Հեծած պատերազմի աստծուն պողպատ թամբով,
Մտքով նորի՛ց քեզ հետ, միշտ քո կողքի՛ն մոտիկ,
Առա՛ջ արշավեցի մեր նահանջի ճամփով:
Մենք միասին անցանք այն ճանապարհն ամբողջ,
Ուր մենք ապրել էինք ցավ ու վտանգ:
Շուրջը այնժամ գարո՛ւն, վառ կանա՛չ էր, բողբո՛ջ,
Արև՛ն էր հաղթության, արյան ցո՛ղքն էր քո թանկ...
Ու մենք Բեռլին մտանք...
Ու ես իմ տուն դարձա,
Արդարությունը երբ հաղթանակեց կյանքում:
Իսկ դու արձանացար,
Դու հուշարձան դարձար
Մայր Վոլգայի ափին, տափաստանում անծայր,
Բուդապեշտո՛ւմ:
Լոնդո՛ւմ,
մարդկանց հոգո՛ւմ:
...Խաղաղությունն է արդ մեր ականջին զնգում
Իբրև մանգաղ՝ արտից, իբրև մանուկ՝ տնից:
Եվ մենք նորից կիսով մեզ զինվոր ենք զգում.
Խաղաղությունն ենք մենք օր ու գիշեր հսկում,
Ես՝ իմ երգերի մեջ, դու՝ քո պատվանդանից...

Երևան